

ծակցութեամբ Թատրոնստեր Հայազանց՝ Տիկին Աննայի Պաօշեանց, Միքայէլի Բուրջալեանց, Մըկրաշի Լևիսանեանց, Խաչատրոյ Դադաշեանց, Յովհաննու Մարգանեանց, Յակովբայ Բուրջալեանց, Բարադամեանց, Եղիշեանց, Բախրեանց, Սեդրեանց, Դուրգարեանց, Չալապեանց, Մէկիբեանց և Մելքոնեանց ի 29 Յունվարի և յ 9 Փետրվարի ներկայ ամի՝ երկիցս ներկայացոյց ի լեզուի Հայոց ի տան ձմեռային Թատրոնի յօգուտ Աստրախանայ Հայոց Հոգեւոր ծխական Դպրոցաց՝ ողբերգութիւն «Արշակ Երկրորդ» և զգոյացեալ դրամս բարձմամբ ծախուց՝ զերեք հարիւր ութսուն ռուբլի (380 ռուբլի) ընդ գրութեան իւրոյ ի 21 Փետրվարի առաջի արար Հոգաբարձութեան Դպրոցաց, յանձնելով և զմի արկղ զետեղմամբ Թատրոնական զգեստուց և պարագայից՝ արժուութեամբ 214 ռուբլի 16 կօպ, Հոգաբարձութիւնս ակորժ պարտաւորութիւն ինքեան համարեալ յայտնեաց ի դիմաց իւրոց զգրուոր զհօւնակութիւն Պ. Մկրաշի Բուրջալեանց և զործակցաց նորա համալծուելով զանուն նորա ի թիւս բարեգործ անգամաց երկեւ Դպրոցաց:

Զայսմանէ ծանուցանելով Խմբագրութեան Արարատայ՝ Հոգաբարձութիւնս խնդրէ խոնարհարար, հրատարակել յընդհանուր տեղեկութիւն Հայկեան ժողովրդոց զազգասիրական զգացմանց Աստրախանայ Հայադն երիտասարդաց:

Հոգաբարձուք Յովսէփ Ա. քհնյ. Բունիաթեանց
Սարգիս Բուրջալեանց
Սիմէօն Պողոսեանց
Գրեգոր Սողոմոնեանց:

Հմբ. 26

է 16 Մարտի 1876 թ.

ՅԱստրախան:

ԱՆՈՒՆՔԱՆԻՆ

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ

Ար փութամ, թէ և ուշ, ուրախութեամբ սրտի յայտնել՝ որ արդէն հինգ ամիս է լինում՝ որ մեր Անալքալաքն ևս այլ քաղաքաց նման արժանա-

ցաւ վայելել Ազգասէր Գէորգ Ահհափառի բարեբարութեան այն շնորհը որ Հայրենասէր Հայրն իւր եռանդուն, անձնուէր հօգացողութեամբ՝ Հայաստանայց եկեղեցւոյ երգեցողութեան անկեալ և խառնակեալ դրութիւնը վերանորոգելոյ համար այնքան աշխատութիւն և ջանք գործընդուն, որով շնորհեց մեր Ազգին և Եկեղեցւոյն իւրեան յատուկ Հայկական Չայնագրութիւն, որոշուտափոյթ տարածման համար ևս ամենայն կարելի միջոց ձեռք է առած հասարակաց Հայրը:

Թէ որքան անհրաժեշտ էր և ամենահարկաւոր մեր Եկեղեցւոյ համար Չայնագրութե անարուեստը և թէ ո՞րքան գովելի էր Գէորգ Ահհափառի այս մեծագործութիւնը, այդ արդէն հասկանալի է այն անձանց, որք խոհական և բազմակողմանի դատողութեամբ զիտեն դատել և վնահատել ամենայն բարի գործ:

Իսկ թէ ի՞նչ խորհուրդ և ի՞նչ հետեանք ունի երգեցողութիւնը մարդկային բնութեան վերայ, թէ ի՞նչպէս նրբացնում, աղնուացնում և փափկացնում է մարդկային սիրտը և ո՞րքան սուրբ և աղնիւ զգացումներ է զարթեցնում մարդու մէջ՝ կանոնաւոր երգասացութիւնը երբ լսելի է լինում՝ այն Աստուծոյ տաճարի մէջ ազգու քաղցր և զրաւիչ եղանակաւ՝ դորա վերայ աւելի խօսել աւելորդ ենք համարում մեր կողմից:

Առ այժմ մենք կամենումենք յայտնել այն որ սկզբում՝ երբ նոր մուտ գործեց Անալքալաքում Չայնագրութեան արուեստը, երբ դեռ առաջին անգամ լսուեցաւ այն Եկեղեցւոյ և Աւսումնարանի մէջ՝ շատ օտոն և խորթ թուեցաւ հասարակութեան և ինչպէս ամենայն նոր բան՝ այդ ևս ունեցաւ իւր ատօղները և հակառակորդները: Ոմանք ասումէին, — «աս նօթան բոլորովին անպիտան բան է եղած», այլք «թէ եղանակները շատ անճոռնի և զլուելի են», եղան այնպիսիք՝ որք այնպէս էին կարծում և այնպէս հաւատացնում ժողովրդեան՝ թէ նօթան մի օտարամուտ նոր ծէս է և դորանով մեր եկեղեցւոյ քաղցր երգեցողութիւնը խաղա խանդավառելու և կորսնակելու է: Բայց այդպիսի թիւր կարծիքներ և դատողութիւնները երկար չըտեսցին:

Չայնագրութեան ուսուցիչ Կարրեջի Կարապէտ Տէր Թովակիմեանցը իւր եռանդուն աշխատութեամբ շուտով վերջ տուեց այդ ամեն զբաւնութեանց:

Այժմ շնորհիւ Պ. Տէր Թովակիմեանցի անխնջ և ջերմ աշխատութեան՝ այդ կարճ ժամանակամիջոցում թէ ուսումնարանի աշակերտները և թէ զիւղական տիրացուները բաւականին զարգացած են և յառաջ գնացած, և իւրեանց կանոնաւոր երգեցողութեամբը այնպէս զրաւած են ժողովրդոց սիրտը, որ հասարակութիւնը արդէն սկսել է գոհունակ և ջերմ սիրով եկեղեցի վազել նոցա քաղցր երգասացութիւնը լսելու համար: Ըստերի բերանից լսումենք. «տեսա՛ր երգեցողութիւնը, արիւնք, ի՜նչ լաւ բան է եղած նոթման՝ ով ի՜նչ կրտէ թող ըսէ, կեցցէ մեր Վեհափառը՝ որ այդպէս հոգս կը քաշէ մեր եկեղեցւոյ պայծառութեան համար»:

Թէև Ախալքալաքում Չայնագրութեան դասատուութիւնը այլ քաղաքներից շատ ուշ սկսուեց, բայց յոյս կայ, որ Պ. Տէր Թովակիմեանցի հմուտ և խղճմտաւոր աշխատութեամբ յետ չ'մնայ նոցանից:

Այս տեղ տղայոց ուսումնարանից ի բաց՝ աղջկանց ուսումնարանումն ևս դաս է տրվում Չայնագրութիւնը *)

Նահանգիս զիւղերից հաւաքուած են Չայնագրութիւն սովորելոյ համար առ այժմ տասն և հինգ տիրացուներից աւելի և օրից օր աւելանումեն, այնպէս՝ որ բաւականին դժուարութիւն է կրում պ. ուսուցիչը պարապել թէ տղայոց, թէ օրիորդաց ուսումնարաններում և միևնոյն ժամանակ պարապել մշտապէս քահանայացու տիրացուների հետ, որք շտապումեն շուտով յառաջ գնալ:

Լսումենք, որ պ. ուսուցիչը կամենումէ իւր յառաջագէտ աշակերտի մինը իւրեան օգնական

*) Այժմ Ախալքալաքի փողոցներից անցկենալիս չիմուիկ շուր մասուկների բերանից անգամ լսումեն Չայնականների առնանքը, որ ամեն քայլափոխում յեղաշրջելով դուրս են հեկեցում իւրեանց բերանից խոս, նէ, պա հնչումները:

կարգել, որպէս զի նա մշտապէս պարապի տիրացուների հետ, որովհետև այս վերջինները ծանր են առաջ գնում և օրից օր շատանումեն:

Կարապետ Տէր Սարգսեան Մարգարեանց
20 Մարտի 1876 -մի,
յԱխալքալաք:

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԷՏ

ԽՈՒՄԱՏԵՐ-ԸՆԴՈՒՆ ԱՐԱՐԱՅ ԱՏԱՏԵՐՈՅ

Հոգաբարձութիւնս օրիորդական Հոգևոր Դպրոցի Հայոց Աղէքսանդրապօլ քաղաքի լացելոյ յերջանկայիշատակ Իշխան Ղահրամանայ Երկայնարազուկ-Արղութեանց ըստ տրամադրութեան 1877 յօդուածոյ կանոնագրութեան նոյն Դպրոցի՝ ընդ այսմ առաքելով ի Խմբագրութիւնդ զտարեկան համառօտ հաշիւ մտից և ծախսուց օրիորդական Դպրոցի վասն անցեալ 1875 ամիս խոնարհաբար խնդրէ հրատարակել զայն յէջս ազգաշահ և ազդօգուտ լրագրոյն Արարատայ ի զիտութիւն համայն հայազանց:

Նախագահ Հոգ. Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանց
Հոգաբարձուց Գովէգի Ա. քհ. Կոստանեանց
Կարապետ Անանիկեանց
Սարգիս Մերգայեանց

Հմր. 10
է 34 Յունիսի 1876 -մի
յԱղէքսանդրապօլ:

ՀԱՄԼԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

(Էնիմիքսիոնը շրջանի օրիորդական Խոբեհոր Դպրոցի Ժողովին Աղէքսանդրապօլ քաղաքի Խոբեհոր Խոբեհոր-Ընդունի Ղահրաման Իշխանի Լեւոնիս-Բաղդու-Արղ-Ընդունի, որ Խոբեհոր-Խոբեհոր-Ընդունի Նոյն Դպրոցին:)

Ա. Հոբեհոր-Ընդունի Ժողով

Նախագահ Հոգաբարձութեան Դպրոցի Փոխանորդ Վիճակին Աղէքսանդրապօլու, չորս Հոգաբարձուք, յորոց մինն վարէ զպաշտօն զանձապահութեան և թոշակատուութեան, և միւսն զպաշտօն քարտուղարութեան առանց վարձու:

Երկրորդ կանգիտադք ևս ի պատճառս հրաժարման երկուց անգամնց Հոգաբարձութեան՝ մտին ի պաշտօն Հոգաբարձուի:

Քառասուն պատգամաւորք ի կողմանէ ժողովրդեան ընտրողք Հոգաբարձուաց: